

ՄԵՃԱԿ

Յարեւան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Ֆիլիսոփա գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мѣсяцъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսցիների հնացած և վնասակար ընթացքը.
— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագրիւն. Նամակ
երեւանից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՆ
ԹԻՒՆ. Կ. Պօլսի հայ-կաթողիկոսները. Տեղեկութիւններ
թիւրքաց չայաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Ծաղիկ և մի քանի տարախոսքի հիւանդ-
ութիւններ Շարուր-Գարալագեաղի գաւառում.

ԹԻՖԼԻՍԵՑԻՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԸՆԹԱՑՔԸ

Թիֆլիսցիների հայերի հնացած և վնասա-
կար հայեացքների շարքում կայ մի շատ
հրէշաւոր, մի այլանդակ հայեացք, որ չէ
կարելի վերին աստիճանի վնասակար չը
համարել թէ քաղաքի հասարակաց գոր-
ծերի առաջադիմութեան և թէ ընդհա-
նուր հայութեան շահերի տեսակէտից:

Թիֆլիսցիների հայը ոչ թէ միայն հայ չէ
համարում այն հային որ լուսաւորչական
կրօնին չէ պատկանում, այլ մի որ և է ու-
րիշ դաւանութեան է պատկանում, օրինակ
կաթողիկ կամ աւետարանական դաւանու-
թեան,—այլ նա իսկապէս հայ չէ համա-
րում և այն հայերին, որոնք չը նայելով
թէ լուսաւորչական եկեղեցու հարազատ
դաւաններ են, բայց բուն թիֆլիսցի չեն,
այլ գաւառացի են, օրինակ զարաբաղցի,
շամախցի, ագուլցի, երևանցի և այլն....

Թիֆլիսցիները միայն իրան չէ հայ համա-
րում և զայրանում է, երբ տեսնում է թէ
մի որ և է եկեղեցի հայ, մի զարաբաղցի, մի
ագուլցի, մի երևանցի սկսում է հետզհետեւ
զերբ բռնել թիֆլիսում կամ իր մտաւոր
գերազանց յատկութիւններով, կամ իր հա-
րաւորութեամբ, սկսում է դեր խաղալ թիֆ-

լիսում, սկսում է մրցել բուն թիֆլիսցի-
ների հետ, սկսում է, այս կամ այն հա-
տարակաց պաշտօններ ձեռք բերել մեր
քաղաքում:

Արդեօք թիֆլիսցիների հայի այդ նեղ,
սահմանափակ հայեացքը առաջ է դալիս
նրա տգիտութիւնից, մտաւորապէս նրա
անդարձացած լինելուց, թէ այդ, ըստ ե-
րևոյթին, բուն բարոյական հայեացքի մէջ
թաղնված է և մի կօպիտ շահասիրական
նպատակ:

Մենք աւելի հակվում ենք դէպի վերջին
կենթադրութիւնը, եւ ահա ինչ պատճա-
ռով:

Թիֆլիսցիներն այնքան նեղհայեաց, այն-
քան սահմանափակ չէ, այնքան յիմար չէ,
որ չը յարգէր մի որ և է հային, չը պար-
ծենար նրա անուանով, չը համարէր նրա
անունը, նրա գործերը ամբողջ ազգի հա-
մար պարծանք,—երբ որ մի հայ (ինչ հա-
յաբնական քաղաքում կամ գիւղում ծնված
էլ լինէր նա) յայտնվում է որպէս ընդհա-
նուր հայութեան համար մի օգտաւէտ
գործիչ: Մասնաւոր թիֆլիսցիներն պարծե-
նում է այնպիսի օտարաքաղաքացի հայ
գործիչներով, որոնք կամ թիֆլիսից գուրս
են ապրում ու գործում, կամ եթէ թիֆ-
լիսում են գործում, նուիրվում են հա-
տարակաց այնպիսի ասպարիզին, որի վրա
գործելով չեն խլում թիֆլիսցիների հայից
նրա կտոր հացը:

Եթէ դուք օտարաքաղաքացի, գաւառա-
ցի հայ լինելով ապրում էք թիֆլիսում
ու պարապում էք լրագրութեամբ, բանա-
սանդժութեամբ, գրքեր հրատարակելով ու
ստանալով աշխատանքներով, բժշկականու-
թեամբ, նոյն իսկ ազգակցութեամբ,—
թիֆլիսցիների հայը միշտ բարեկամաբար կը
վերաբերվի ձեզ, նայն որովհետեւ դուք ձեր
այդ աշխատութիւններով դրա բերանից

կտոր հացը չէք խլում իսկ երկրորդ որ
թիֆլիսցիների հայը շատ լաւ գիտէ և գի-
տէ թէ մտաւոր աշխատանքի ասպարի-
զում նա երբեք չէ կարողացել մրցել օտա-
րաբնակ հայի հետ, քանի որ մտաւորա-
պէս ստոր է բոլոր միացած հայերից:
Թիֆլիսցիներն շատ լաւ գիտէ թէ մտաւոր
կեանքի ասպարիզում տարիներին ի վեր
հայութեան միջից արտադրած և ամբողջ
հայութեանը յայտնի անձնաւորութիւննե-
րը բոլորն էլ օտարաքաղաքացի են եղել:
Մինչդեռ թիֆլիսը ամբողջ հայութեան
մէջ բուն հայոց մտաւոր ասպարիզում յայտ-
նի մարդկերանց շարքում մինչև այժմ մի-
միայն Գաբրիէլ Սոււնդուկեանցին է արդի-
նաբերել,—մեր բոլոր ուսուսհայ միւս մը-
տաւոր, բուն հայկական գործիչներից ոչ
մինն էլ թիֆլիսցի չէ: Արդեօք, Պո-
շտանց, Ստեփաննոս Նազարեանց, Գաբրիէլ
Ալիազովսկի, Միլոտիչ Էմին, Բաֆայէլ Պատ-
կանեան, Միքայէլ Նալբանդեանց, Բերովսէ
Պատկանեան, Գալօք Մէլիք-Յակոբեան, մեր
բոլոր անցեալ և այժմեան մտաւոր գործիչնե-
րը, խմբագրապետները, նրանց բոլոր քիչ թէ
շատ նշանաւոր աշխատակիցներն ու լրագ-
րակիցները,—ոչ մինը նրանցից թիֆլիսցի
չէ: Եթէ, յիշեց հայերին, որոնք պետական
կեանքի մէջ յայտնվեցան, ինչպէս Ներսէս
Վրին, Կէլիստոյլին, Լօրիս-Մէլիքովին, նոյն
իսկ Կարապետ Եղովին, յիշեց ուսումնա-
կան ասպարիզում յայտնի ուսանողանցի
հայերին, համալսարանների պրօֆէսորնե-
րին (որոնք թէ ուսանողանքում և թէ ար-
տասահմանում թւում այժմ 6 հոգի են և
նրանցից ոչ մէկը թիֆլիսցի չէ), յիշեց գեղարուեստի մէջ
թիֆլիսցիները հռչակ առաջած հայերին, յի-
շեց մեր բոլոր նշանաւոր բժիշկներին, քիչ
թէ շատ յայտնի ուսումնական իրաւաբան-
ներին և պրակտիկայով պարապող աղօ-
սիչներին և անկողինը հանում էին և գիւղի մօտ ա-

կաններին,—կը համոզվեց որ թիֆլիսե-
ցիք կամ բոլորովին բացակայ են այդ ա-
նունների շարքից, կամ շատ թույլ բոլորո-
վին աննշան տոկոս են տուել մեր յայտնի
մտաւոր գործիչների կօնախնդէնտին:

Չարմանալի է միայն որ գիւղաւորական
ճառագործեան մէջ վրացիացած թիֆլիսե-
ցի հայերը գրեթէ նոյն քանակութեամբ
նշանաւոր մարդիկ են տուել, որքան և
միւս տեղերի հայերը:

Ուրեմն թիֆլիսցիների հայը շատ լաւ գի-
տէ թէ մտաւոր ասպարիզում նա անկա-
րող է մրցել միւս տեղերի գաւառացի կամ
բուն ուսանողանցի հայերի հետ,—և այդ
պատճառով համբերող է դէպի օտարաքա-
ղաքացի հայերը, բարեկամաբար է վերա-
բերվում նրանց, չէ արգելում նրանց առաջ
գնալ յայտնվել, բարձրանալ....

Բայց հէնց որ մի օտարական հայ գալիս
է թիֆլիս և հակում է ցոյց տալիս որ և
է նիւթական, դրամական, ֆինանսական,
առևտրական, ազգային-հասարակական, կամ
ընդհանրապէս հասարակական դիրք ձեռք
բերելու,—անմիջապէս բոլոր թիֆլիսե-
ցի հայերը գիւղաւորվում են դրա դէմ,
սկսում են կատաղի կռիւ մղել նրա դէմ և
երբեք չեն թողնում որ մի օտարաբնակ,
թիֆլիս եկած հայը կարողանայ թիֆլի-
սում որ և է հասարակական պաշտօն ձեռք
բերել....

Եւ ահա մեր թիֆլիսցիք սկսում են
գոչել թէ այդտեղ «սկզբունքի հարց» կայ:

Տարակուսում ենք, որ այդտեղ որ և է
«սկզբունքի հարց» կայ, բայց ճիշդն այն
է, որ թիֆլիսցիները չեն հարգում այդ սկզբունքը:

Մտաւոր կեանքի մէջ թիֆլիսցիներն ուրիշ
հայերի հետ մրցել չէ կարող, նա այդ
գիտէ, և չէ էլ փորձում մրցելու, իսկ երբ
որ փորձում է միշտ չարաչար վնասվում է,
ինչպէս ասում են լաւ խրվում է.... Իսկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՂԻԿ ԵՒ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԱԲՈՒԹԻՒՆ ԹԻՒՆՆԵՐ ԶԱՐՈՒՐ-ԳԱՐԱԼԱԳԵԱՂԻ ԳԱՍԱՌՈՒՄ

Անցեալ 1887 թ.ի նոյեմբերին պաշտօնապէս
ես գտնվում էի Շարուր-Գարալագեաղի գաւառում
ծաղիկ պատուաստելու և տարախոսքի հիւանդու-
թիւններով վարակված անեղը ախտահանելու հա-
մար (для производства дезинфекции):

Ինչպէս տեղեկացայ և ինքս նկատեցի, այդ
գաւառում, սկսած 1887 թ.ի սկզբից մինչև ներ-
կայ տարվայ մարտի վերջը սկսեցին երևալ զա-
նազան տարախոսքի հիւանդութիւններ երեւա-
նների մէջ, ինչպէս՝ ծաղիկ, կարմրուկ, զիֆտերիտ
և մի քանի տեսակ այլ հիւանդութիւններ անա-
յին կենդանիների մէջ: Երեւանցիները մէջ տարա-
փոխիկ հիւանդութիւններից ծաղիկը աւելի ըն-
դարձակ կերպով տարածվեցաւ, որը և բաւական
զգալի թւով զոհեր տարաւ 1—13 տարեկան երե-
ւանցիներից: Գիւղ չը մնաց, ուր ծաղիկը մուտք չը
գործէր, տուն չը թողնէ որին չայցնէր, այդ-
պէս մէկ գիւղից մուտք անցնելով և ամեն գիւղից
20—30 և աւելի երեւանցիներ զոհ տանելով, թող-
նում էր խեղճ որդեսը ծնողներին անմխիթար,
աղի արտասուքի մէջ: Գիւղերի ամեն կողմերից
լսելի էին լինում խեղճ մայրերի սրտաճմլիկ ա-
ղակը և լացը, որոնցից մէկը դեռ երեկ 2—3 ե-
րեխայ էր թաղել ծաղիկից, միայնը մերձ ի մահ
հիւանդ է, երրորդը երեխայի աչքերն էր փչաց-
րել ծաղիկը և այլն և այլն: Մի խօսքով Շարուր-
Գարալագեաղի գաւառում ծաղիկը այդ երկու
տարվայ ընթացքում տուն չը թողնէ, որ իր աւե-
րիչ ներգործութեամբ չենթարկէր, կամ իր անջն-

ջնի դրուշը չը խփէր երեխաների դէմքի և
մարմնի այլ մասերի վրա: Արդեօք ինչպէս է վե-
րաբերվում Շարուր-Գարալագեաղի ժողովուրդը
դէպի ծաղիկահատութիւնը և ախտահանութիւնը
(զեղինիցեցիան): Յաւելով պէտք է ասեմ, որ
շատ անտարբեր և սառւ.—նա, ժողովուրդը, ծա-
ղիկ պատուաստելը, որը գրեթէ արմատական մի-
ջոց է այդ ախտից ազատ մնալու, և ախտահա-
նութիւնը վերացական մտքից ծնած կանօններ
է համարում, որոնք, իբր թէ ոչ օգուտ կարող
են տալ և ոչ էլ վնաս, բայց, ինչպէս իրանք ա-
սում են, իբրեւ սրտի թաւալութիւն (հանգստու-
թիւն), նրանցից մի քանիսը իրանց երեխաների
ծաղիկը պատուաստել են տալիս հետեանքը թող-
նելով Աստուծու կամքին: Եթէ Աստուծու կամքը
լինի, ասում է շարուր-գարալագեաղցիներ, մեր ե-
րեխաները ծաղիկ կը հանեն և անվտանգ կա-
ռողջանան, իսկ հակառակ դէպքում ոչ մի միջոց,
նոյն իսկ ծաղիկահատութիւնը անկարող է ծաղիկ
հիւանդութեան դէմն առնելու և հիւանդին մա-
հից ազատելու իսկ ինչ վերաբերում է ախտահա-
նութեան, նրանք, բացի նրանից որ անօգուտ բան
համարում, համոզված են նաև, որ այդ գործ-
ողութիւնը միայնակապէս Աստուծու հակառակ է:

Շատերը հակառակում էին թող տալ իրանց տները
ինթարկել ախտահանութեան, ասելով՝ «առանց
էն էլ Աստուծոյ, մեր մեղքը համար, բարկացել
է մեզ վրա և այդպէս անխնայ կտորում է (մեռ-
ցնում է) մեր երեխաները և ամասունները, իսկ
եթէ թող տանք այդ բանը, դուցէ նա մեզ վրա
աւելի զայրանայ մեր թերահաւատութեան հա-
մար և ով գիտէ այն ժամանակ ինչ տեսակ պա-
տուհաս ուղարկէ մեզ ջնջելու: Թուրքերը միայն
գամայն արհամարհանքով էին վերաբերվում դէպի
ախտահանութիւնը, մասնաւոր կարբօլեան ջրի
սրկելը խեղճների մէջ գտնված իրեղէնների
վրա (զա ախտահանութեան մի կանօնն է): Եւ
գործս վերջացած հէնց գիւղից հեռանում էի թէ
չէ, նրանք տան մէջ գտնված բոլոր կահկարա-

սիքը և անկողինը հանում էին և գիւղի մօտ ա-
ռուկ ջրի մէջ մաքուր լուսնում, իսկ վերջը ա-
մեն մի առաւելան նոյն ջրի մէջ առանձին ա-
ռանձին երեք անգամ ընկղմելով և հանելով, սա-
լաւաթի էին քաշում, որից յետոյ պղծված ա-
ռարկաները նորից մաքրված համարելով, տա-
նում էին տուն: Մինչև անգամ խրճիթի պատերը,
առաստաղը և յատակն էին լուսնում թաց ջրի
կտորով: Եթէ այդպէս չանէին բարեպաշտ կրօ-
նամոլները, այն պղծված տան մէջ իրաւունք
չունէին սովորական նամաղը կատարել, կամ հէնց
այն խրճիթում ապրել:

Անասունների հիւանդութիւններից էլ, ինչպէս
լսեցի բնակիչներից, նորա մեծ կորուստ ունե-
ցան, բայց որովհետեւ դա իմ պաշտօնից դուրս
էր, ուստի չեմ էլ կարող գոնէ մօտաւորապէս
տեղեկութիւն տալ այդ հիւանդութիւնների մա-
սին:

Օգտվելով հանգամանքից աւելորդ չեմ համա-
րում հարկանցի անխաղի ձգել Շարուր-Գարալա-
գեաղի գաւառի բնակիչների նիստ ու կացի և
պարապմունքների վրա, բացատրելով առհասա-
րակ բոլոր տարախոսքի հիւանդութիւնների ծաղ-
ման և առանձնապէս ծաղիկ ախտի աւելի
ընդարձակ տարածվելու գլխաւոր պատճառնե-
րը:

Շարուր-Գարալագեաղի գաւառը, ինչպէս և
ցոյց է տալիս իր անունը, բաղկացած է զլխա-
ւորապէս երկու մասերից. Շարուրից և Գարալա-
գեաղից, որոնք տարբերվում են իրարից շատ
կողմերով: Շարուրի գիւղերը տարածված են տա-
փարակ դաշտի վրա, գտնվելով իրար բաւակա-
նին մօտ տարածութեան վրա, ամենահեռուն 7
վերջոյ հաղիւ լինի. բնակիչները բաղկացած են հա-
վերտ հաղիւ լինի. բնակիչները կազմում են թուրքե-
ցիներից: Միեւնամանութիւնը կազմում են թուրքե-
րը. հայերը հաղիւ թուրքերի 100-ից 18—22 մա-
սը լինեն: Բնակիչները պարապում են հողագոր-
ծութեամբ, անասնապահութեամբ և այդպիսի տա-

թեամբ: Հողագործութեան գլխաւոր նիւթերն են
բամբակը և չալթուզը (բրինձը), որից ժողովուրդ-
ը մեծ օգուտներ է ունենում առատ տարին
Յօրեն ու գարի ցանում են այնքան, որ միայն
բաւականացնէ ընտանիքի տարվայ ուտելիքը (խո-
ւաղը), շատերը ծխական հողի քլոթեան պատ-
ճառով այդ քիչն էլ չեն ցանում, թողնելով հողը
բամբակի և չալթուզի համար: Գանձերը և այդ-
ները ջրով են թէ խմելու և թէ ցանքերի հա-
մար ջուրը վերցնում են Արփաչայ անուանված
գետից, որը սկիզբը առնելով Գարալագեաղի
լեռներից՝ դալիս է և բաժանվում է Շարուրի գիւ-
ղերի վրա շատ մեծ ու փոքր (ամեն գիւղի հա-
մար առանձին փորված) առուներով և առուակ-
ներով: Գանձի համար այդ ջուրը բաւարար է և
մինչև անգամ առատ խմելու համար գարուն, ա-
շուն և ձմեռ ժամանակները, բնակիչների ասելով,
բաւական առողջարար է, ի հարկէ, երբ նա մա-
քրված լինի պղտորութիւնից, իսկ ամառ ժամա-
նակը, իմ կարծիքով, այդ ջուրը բոլորովին վնա-
սակար պէտք է լինի խմելու համար և մինչև
անգամ ստամոքսի մէջ քանի տեսակ հիւանդու-
թիւնների և մալարիայի (տնեղ) տարածվելուն
նպաստող, որովհետեւ. ա) Տեղիւ բնակիչները ու-
րիշ ջուր չունեն և պարտաւորված են լինում
խմել Արփաչայի, արևի տակ տաքացած, պղտոր
ջուրը, իրանց գիւղին սեփականացրած առուից
վերցնելով և բ) որ, ինչպէս դիւրացիները ասում
են, չալթուզը ցանվում է Արփաչայի և առուների
ափերում, ուրեմն այդ ջրերի մէջ կը ծծվի ան-
պատճառ չալթուզի 1—2 շաբաթ անշարժ մնա-
ցած հոտած ջուրը, որից փչում է գարշահոտու-
թիւն, որը ինքն ըստ ինքեան հասկանալի
է թէ որքան նպաստող է վերոյիշեալ հիւան-
դութիւնների տարածվելուն: Շարուրում կան
և ջրհորներ, բայց նրանք էլ հոտանք չունենալու
պատճառով ջուրը վնասակար է խմելու համար.
այդ ջուրը տեղացիք գործ են ածում լուացքի և
սրա նման հարկաւոր դէպքերում:

այլ և այլ մանր հասարակաց պաշտօնների վերաբերմամբ, որոնց վարելու համար այնքան խելք ու մտաւոր զարգացում հարկաւոր չէ,—[Թիֆլիսեցի հայերը անմիջապէս միանում համախմբւում են և ընդհանուր հաւաքական ոյժերով սկսում են զինամարտի եկտոր հայերին ու վերջ ի վերջոյ յետ են մղում նրանց բոլոր հասարակաց պաշտօններէջ։ Այդ է պատճառը, որ Թիֆլիսի բանկերի, քաղաքային վարչութեան, այլ և այլ հասարակաց և ազգային հաստատութիւնների մէջ բոլոր դիւանոր պաշտօնները Թիֆլիսեցիների ձեռքումն են։

Բայց Թիֆլիսեցի հայերը մանաւանդ այն ժամանակ սկսում են «սկզբունքի հարց» յարուցանել, այսինքն կատարել կուսի հարցը ընդդէմ եկտոր դաւաճացի հայերի արշաւանքի, երբ բացի բուն նիւթական ընդհանուր հարցից կայ և անմաքուր նիւթական գործունէութեան, անմաքուր կասկածելի ֆինանսական գործաւարութեան հարցը, որի զեղծումները մերկացրած լինելու վրէտանգից ազատելու համար՝ հարկաւոր է a tout prix ամեն բան ծածկել, թագանել... այն ժամանակ յարուցւում է նորից այդ անխմբած սկզբունքի հարցը, որպէս զի փողաւոր որ և է հասարակաց պաշտօն չանցնի մի բուն Թիֆլիսեցու ձեռքից մի որ և է զիցուր զարբաւղցու ձեռքը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Ապրիլի 30-ին

Բաժնի մահուան բոլոր իբրև մի զօրեղ զերնական ոյժ ցնցեց և ոտքի կանգնեցրեց ամբողջ հասարակութիւնը։ Հանդուկեալ վիպասանի ամենաեղանակեալ երկրպագու արհեստաւորներից սկսած մինչև հարուստ դասակարգը բոլոր զգացման, բոլոր տրեղիքի։ Չքաջա նիւթական աշխարհից տոկուն մարդը, սակայն ամենափոքր իրենցական զգացմունք ունեցող սարդիկացի արտերուստ էլ յաւիտեան կենդանի և անջնջելի կը մնան նրա դադափարները ու հանրամարդկային պաշտելի իղնջները։ Կայ արեւոք հայ մարդ, որ եթէ կարգաւ գիտէ՝ կարգացած չը լինի, եթէ ա-

Անցնելով Արիւսային հոսանքին հակառակ, դէպի արեւելեան կողմը ճանապարհը տանում է մեզ մի լայն ձորի միջով, որի աջ կողմից փրփրալից վազում է Արիւսայը։ Բարձրանալով այդպէս մօտաւորապէս 6—7 վերստ հանդիպում ենք այդ ճանապարհի ձախ կողմի վրա ընկած մի ճանապարհի ևս, այդ երկու ճանապարհներից են, որոնք դանազան կողմերից տանում են դէպի Գարալագեաղի լեռները։ Բարձրանալով լեռների բարձրութիւնները իսկոյն աչքի են ընկնում հեռուից երևացող լեռների ստորոտում և ձորերի մէջ ընկած գիւղերը, ձորերից վազող պարզ, արծաթափայլ լեռնային ջրերը, տեղ տեղ հայոց հին վանքերի աւերակները և հինաւորաց կանգուն վանքերը, որոնք քանդկուտ վրա են անխնամութիւնից, չորս կողմից լսելի են կարճաւների անոյշ ձայները, այնպէս որ մարդ մի հետաքրքրի աւարկայից դէպի միւսը անցնելով, զբաււած է լինում աչքի ընկնող նորանոր տեսարաններով և չէ զգում թէ ինչպէս հանկարծ հասնում է իր ցանկացեալ գիւղը։ Գարալագեաղի ընկալիչներն էլ պարագայում են հողագործութեամբ և անասնապահութեամբ, բայց այնտեղ ցանում են ցորեն և դարի, որոնք անջրդի են (դէմի են)։ Իսկ անասնապահութիւնը այնտեղ մեծ տեղ է ընդունում ժողովրդի պարագայում։ Դե՛, պահում են մեծ հօտերով ոչխարներ, կովեր, եղջեր և մօտակներ, որոնց ամառ ժամանակը տանում են ամառանոց-լեռների աւելի բարձր մասերը, խոտի առատ տեղը, ուր գնում է զիւղացու գերդաստան մի մասը։ Այդ ամառանոցներում, ինչպէս ասում են, մինչև յուլիսի կէսը, տեղ-տեղ մինչև վերջն էլ դեռ ձիւն է լինում։ Իսկ Գարալագեաղի այն հայ գիւղացիքը, որոնց գիւղերը ընկած են Արիւսայի երկու ափերի վրա, պարագայում են և այդպէս անութեամբ։ Այնտեղի գիւղին բաւական թանձր, անուշահամ է և զեղեցիկ զոյն ունի։ Նա աւելի լաւ կը լինէր, գուցէ յետ չը մնար Նախիջևանի և նոյն իսկ Կախեթու գիւղացի, եթէ որ

կանջ ունի՝ լսած չը լինի այն ստեղծագործութիւնները, որոնք այնպէս ամենազօրեղ կերպով նպաստեցին ազգային մտաւոր վերածնութեան գործին։ Բաժնի գրեւորները բացի գրական մեծ արժանաւորութիւնից, անշուշտ նաև պատմական փառաւոր յաղթանակը տարան, կազմելով մի անմոռանալի դարապուխ մեր մտաւոր վերածնութեան փառաւոր ասպարիզում։ Անուշաւալի է, որ այդ ասպարիզում նախ «Հիւսիսափայլ», ապա «Մշակի» անունների հետ Բաժնի անմոռանալի անունը իբրև մի պայծառ աստղ միշտ կը փայլի։

Հայ հասարակութիւնը դեռե՛լ այդ. նա զգում է այդ, նա խոստովանում է, խոնարհւում է այդ ոյժի առաջ, և, ահա ամբողջ Բագուս զգացված կենդանութիւն էր առել և չը գիտէր ինչպէս և րախտագէտ լինի դէպի իր անփութարիները, տուրն մշակի յիշատակը։ Փոքրիկ Բագուս միանգամայն, մի քանի ժամկէտ ընթացում, զանազան չըջաններ կազմելով ուղարկում է 11—12 պըսակ, անգնահատելի վիպասանի դադաղի վրա դնելու համար։ Այսակ արհեստաւորների կողմից, պսակ կարա-Մուրդայի երգեցիկ խմբի կողմից, պսակ երիտասարդների կողմից, պսակ Մարդ. ընկերութեան, աշակերտների, տիկիւնների, գործակատարների, ուսուցիչների, աւետարանական համայնքի, նաւթալաւանների և աշակերտների կողմից։ Ահա ճամբարի երախտագիտական կայծեր, ահա բարդական վերականգման զօրեղ նըշյոյներ։

Բանաստեղծի հոգին կը տեսնի, որ իր բրտիքը է զուր չէ թափել, որ իր ցանած սերմերը տալիս են ցանկացած պտուղները, կը տեսնի, կը զգայ, և հանգիստ կը մանի խաղաղ յաւիտեանականութեան գիրկը։

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 26-ին

Եթէ նայելու լինենք լրագրական լուրերին և տեղեկութիւններին, մենք կը տեսնենք, որ զանազան քաղաքներում և մինչև անգամ նշանաւոր գիւղերուս պարզուս ու բարդորոտապա ընդգրութիւններ, հիմնւում են արհեստանոցներ և աղբատանոցներ, որոնց մէջ ապաստան են գտնում չունեւոր դասակարգը և աղքատները, բայց արեւոք երևանում այսօր կան բարեգործական ընկերու-

կանոնաւոր պատրաստվել, բայց Գարալագեաղում գինեգործութիւնը կատարվում է ամենահին նահապետական ձևով։ Գարալագեաղի ազգայնականութիւնը կազմում են հայերը և թուրքերի մի ցեղը, որին անուանում են «չորուս», այդ թուրքերի բարբառը ըստովին մեզ անհասկանալի է և նման չէ մեզ չըջապատող թուրքերի բարբառին, նրանք խօսում են մեր թուրքերի բարբառով, իրանց չը հասկացող մարդկանց հետ։ Գարալագեաղի կանայք էլ անգործ չեն, նրանք ամառանոցներում կ'ընեն և ոչխարները և կովերը, որոնց կաթից պատրաստում են պանիր, իւղ և այլն, իսկ ձմեռը զօրում են սննդակիւնների փոռածները, զօրգեր, փայտներ և այլն։ Չորուս կանանց գործած գորգերը աւելի նուրբ են և թանկ են ծախվում։ Գարալագեաղի զանազան կողմերում կան և հանքային ջրեր խմելու և լողանալու համար, այդ ջրերը գործ են անում բժշկական արհեստի մէջ։ Որինակ Գուշի-բիւլա՞, այդ ջրի մէջ լողանալու համար ամառվայ յուլիսի և յուլիսի ամիսներում թափվում են Նախիջևանի, Դուշու և Դարուր-Գարալագեաղի գաւառներից հազարաւոր մարդիկ զանազան տեսակի հիւանդութիւններից բժշկվելու համար, այդ բանի համար նրանք չինել են աւազաններ, հաւատացնում են որ շատերը իրանց հիւանդութիւններից կատարելապէս առողջացած են վերադառնում տուն, առաւել օգտվում են բեմամտիւմ հիւանդութիւնից (բատուց)։

Տարափոխիկ հիւանդութիւնների գոյութեանը ու տարածմանը, իմ կարծիքով, նպաստում է առողջապահական կանոնների յետին աստիճանի ընկած գրութիւնը այդ գաւառի գիւղերի և բնակարանների մէջ։ Երբ դարձան և աշնան ժամանակը մարդս մտնում է որ և ինչ մի գիւղի մէջ, առաւել ևս անձրեւային օրերում, նա իսկոյն ըզգում է սաստիկ գարշահոտութիւն, որը քիչ է մնում մարդուս չնառութիւնը սպառնցնէ։ Այդ

թիւններ, կայ արհեստանոց, կայ արեւոք աղբատանոց, որոնց մէջ ապաստան գտնելն չունեւոր դասակարգի մարդիկ և մերկ ու քաղցած աղքատները, կան արեւոք այնպիսի մարդիկ, որոնք աշխատելն և հող տանելն այդպիսի բարեգործական ընկերութիւնների և հիմնարկութիւնների թէ կազմվելուն և թէ գոյութիւնը պահպանելուն։ Ոչ, երեւանը զուրկ է այդ բոլորից, զուրկ է բաւել բուն նշանակութեամբ։ Եթէ երևանը համեմատենք կովկասի միւս քաղաքների հետ, կը տեսնենք որ երևանն է առաջին բաղմանայ և կենտրոնական քաղաքը, իսկ եթէ համեմատելու լինենք Ներքին առաջադիմութեամբ, մի տխուր պատկեր կը ներկայացնի մեր առջև երևանը իր անտարբերութեամբ և թմրութեամբ։ Ամօթ չէ բերում երևանցիներին, երբ մէկը ոտը է դնում ս. Պողոս Պետրոս կամ ս. Սարգիս եկեղեցիների գաւթիները, իսկոյն աչքի է ընկնում աղքատների ստուար բաղմութիւնը, որոնք մէկը միւսի կողքին նստած, մի չլթայ են ներկայացնում մինչև եկեղեցու շէմքը, մէջտեղ թողնելով մի անցը, ժողովրդի համար, որոնց տարօրինակ ձայները թէ վատ տպաւորութիւն են թողնում մարդու վրա և թէ ձանձրացնում են ամեն մի անցնողի։ Ամօթ չէ բերում երևանի հայերին այն բաղմութիւն աղքատների տխուր պատկերը, որոնք շարժվել օրերը չուկալում, իսկ իրարի օրերը թաղերում, կոյր, կաղ, անդամահատ, ալկոհոլիկ, մերկ կամ ցնցոտիների մէջ, ամեն անցնողի մօտենալով կամ ամեն մի խանութ և տուն մտնելով ողորմութիւն են խնդրում։ Լաւ չէր լինի որ երևանցիները հիմնէին մի անգամ աղքատանոց, որով ժողովրդին աղատած կը լինէին աղքատների պատճառած թէ վրդովմունքից և թէ ձանձրութիւնից։ Շատերը գուցէ ասեն թէ ինչ միջոցներից աղքատանոց հիմնենք։ Աղքատանոցը չի պահանջի երևանցիներից ոչ անձնագրահիւն և ոչ անագին գումարներ, այլ տարեկան մի որոշ եկամուտ, որով ազատված կը լինի շատ թշուառների կեանքը։

Այն մատաղների վրա, որոնք սովորաբար լինում են երևանի վեց եկեղեցիներում, Չատկի կերակի պատարագից յետոյ մի փոքր հաց և մի երկու կտոր միս տալով ամեն միկին, աւետաղը օտարալուս 5 սօտ հաղար բուլբը, որը գումարվում է ծխականներից, կարծես երևանցիներից շատերը կը համոզվեն որ այդպիսի մատաղներ թէ աւելորդ են և թէ անտեղի, որի վրա ծախսվելի դուռները գործադրելով բարեգործական նը-

գարշահոտութիւնը փչում է փողոցներում վայրցած շան, կատուի և ուրիշ կենդանիների լէշերից ու աղբի (փէշինի) փռածածկներից։ Վերջինը խառնվելով անձրեւի ջրի հետ, դառնում է մի տեսակի զեղնաղոյն, գարշահոտ, թանձր հեղուկ փողոցների շատ տեղերում և բակերում Գիւղերի փողոցները նեղիկ և անկանոն են, մտնում էք խրճիթը, որը ամբողջ գերդաստան միակ բնակարանն է, թէ գիւղերը քնելու և թէ ցերեկը նիստու կացի համար, էլի նոյն անխնամ գրութիւնն է ներկայանում ձեր աչքին, խրճիթի մի անկիւնում կապած է նոր ծնած գաւու, միւսում հորթը, որոնց տակի տալը 3—4 օր է չէ սրբած, իսկ մէջտեղում տեղաւորված է ամբողջ գերդաստանը, որը բաղկացած է լինում 15—30 և աւելի հոգուց։ Մասնաւորապէս ծաղիկ հիւանդութեան տարածվելուն նպաստում է, բացի վերոյիշեալ պատճառներից, ինչպէս տեղեկացայ մասնաւոր աղբիւրից, և տեղիս պատաւ կանանց ձեռքով բնական ծաղիկի թափախով ծաղիկ պատուաստելը, որը կատարվում է հետեւեալ ձևով, այդ կանայք վեր են առնում բնական ծաղիկ հիւանդ երեխայի ջուր բռնած ծաղիկի թափախը հասարակ դանակի ծայրով առողջ երեխայի թխի վրա չորս տեղ խաչաձև, յետոյ փնթիթթալով որ և է մի աղօթք սկսում են ծակծկել այն տեղերը, առաջուց իրարու կապած 10—15 ասեղների ծայրերով, մինչև որ երևում է արիւն, յետոյ թողնում են արիւնը չորանում է ու թխը կապում են, այդպիսով նրանք պատուաստում են առողջ երեխաների վրա վարակիչ բնական ծաղիկը, որը աներկաբայ կարելի է տեսնել, զլխաւոր պատճառն է եղել ծաղիկի աղբաւ տարածվելուն։

Վերոյիշեալ տարափոխիկ հիւանդութիւնների դէմն առնելու և նրանց տարածվելը արգելելու համար անշուշտ հարկաւոր են հետեւեալ պայմանները. ա) որ ամեն շինական տանուտէրերը և իրանց օգնականները սաստիկ հսկողութիւն ու-

պատակով, կարող է աւելի մեծ օգուտ տալ քան թէ մատաղը։ Ուրեմն լաւ չէր լինի որ այդ անտեղի սովորութեան վրա ծախսվող դուռները յատկապէս իր բարեգործական նպատակի և հիմնէին մի աղքատանոց, վերջ դնէին թէ տխուր պատկերների և թէ ամօթ բերող հանգամանքներին։

Անկասկած, երբ ժողովուրդը տեսաւ որ իր աղքատ կոպէկները չեն ծախսվում անտեղի մատաղների վրա, այլ գործ են զրկում այնպիսի բարեգործական հիմնարկութիւնների վրա, որպիսին է աղքատանոցը, այն ժամանակ ոչ թէ կը տայ 50 կօպէկից մինչև մի բուրլի, ինչպէս է մինչև այժմ, այլ մի բուրլուց մինչև հինգ բուրլի՝ որի արդիւնքով կը պահպանվի մի համեստ աղքատանոց։ Այսպէս անելով երևանցիները թէ իրանց պատիւը կը բարձրացնեն և թէ վերջ տուած կը լինեն շատ թշուառութիւնների։

Յ. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՁԴՕԿԻՑ մեղ գրում են հետեւեալը։ «Մօղղօկի ս. Աստուածածնի և ս. Գեորգ եկեղեցիները երեցփոխան պ. Թուշմայեան հրաժարվում է հաշիւ տալուց իր երեցփոխանական գործունէութեան մասին, չը նայելով որ ժողովուրդը նրանից հաշիւ է պահանջում։ Յայտնի է, որ յիշած պատիւ մօտ եկեղեցական մի խոշոր գումար կայ, որի ինչ կերպով գործադրելու մասին շատ քիչ է յայտնի։ Ինչպէս երևում է, երեցփոխանական հաշիւաւորութեան խնդիրը ընդհանուր ցաւ է դարձել հայերի համար։ Յիշեցնում ենք պ. երեցփոխան, որ հաշիւ ներկայացնելը աւելի կը բարձրացնէ նրա յարգը և գործունէութեան նշանակութիւնը միայն, և ուրիշ ոչինչ։»

«Մշակի» անցեալ համարում հազարգումով Բաժնի գրեւորներից ցուցադր, մենք մոռացանք յիշատակել նրա «Փունջի» երկու հատորները, որոնցից առաջինը մէջ տպագրված են ոտանաւորներ, իսկ երկրորդը մէջ վէպիկներ։

Կ. Պօլսի հայոց այժմեան պատրիարք Յարութիւն Կարսկոպոսը ոչ թէ միայն ժողովրդականութիւն չունի ներկայումս Պօլսի հայ ազգայնականութեան մէջ, այլ նոյն իսկ նրա դէմ զանազան թշնամական ցոյցեր են լինում։ Մեղ հասած մասնաւոր նամակներից երևում է, որ Չատկի առաջ հինգ-

նանան գիւղերի մաքրութեան վրա, բայց որովհետեւ իրանք շատ անգամ ուրիշ ծառայութեան գործերից ստիպված, գիւղերից բացալայ են լինում, ուստի հարկաւոր է որ նրանք իրանց միջի պատուաւոր շինականներից ընտրեն ամեն մի գիւղի համար 3—6 հոգի, նայած գիւղի մեծութեանը, որոնց պարտաւորութիւնը պէտք է լինի խրատել խորհուրդ տալ և ստիպել որ տանտէրերը իրանց և անասունների բնակարանները, բակերը և փողոցները ամեն օր սրբեն և աղբը տանեն գիւղից բաւական հեռու թափել, լէշերը գիւղից հեռու խոր փոսի մէջ թաղեն և այլն։ Մի խօսքով ամենայն միջոց գործ դնեն գարշահոտութիւն պատճառող առարկաները իրանցից հեռացնել, իսկ երբ գիւղացիներից ունենք կը հրաժարվեն նրանց այդ օրինաւոր պահանջները կատարելուց, թող նրանք իսկոյն և եթ յայտնեն տանուտէրին, որը յանցանքին համեմատ կը պատժէ հակառակողին կամ տուգանքի կենթարկէ։ Բ) Ամեն մի շինական հասարակութիւն վարձէ դռնէ մի ուսում աւարտած ֆէլդչէր և նրան օգնական մի ծաղկահատ, որոնց պարտաւորութիւնը պէտք է լինի ծաղիկ պատուաստել, իսկ ֆէլդչէրը բացի դրանից պէտք է պարագէ թխի և հիւանդութիւնների բժշկութեամբ ևս իրան յանձնված զեղերով, հասարակութիւն հաշուով զնված։ Այնպէս տարափոխիկ հիւանդութիւնների առաջն առնել, երբ նա կը նկատէ մի տան մէջ այդ տեսակի հիւանդութիւններով վարակված երեխաներ կամ հասակաւոր մարդիկ, և իսկոյն հարկաւոր նախազգուշութիւնները գործ դնելուց յետոյ, յայտնէ տանուտէրի միջոցով գաւառապետին, որ կարելի լինի ժամանակին հիւանդութեան դէմն առնելու։

Ն. Միլոյդեանց

շարժի գիշերը, երբ Յարութիւն պատրիարքը քա-
րող պիտի տար, մի երեսասարդ մօտենալով նը-
րան յայտնում է, որ եթէ նա քարող խօսի, նրա
դէմ մեծ ցոյց պիտի լինի: Որ և է վտանգից ա-
զատ մնալու համար պատրիարքը հրաժարվում է
քարող խօսելուց, և փոխանորդն է ստիպվում քա-
րողելու: Առհասարակ Յարութիւն Պատրիարքի
յարարեութիւնը ժողովրդի հետ շատ սուր կեր-
պարանք է ստացել:

Իսկ Բիւրի գերեզմանի վրա արձան կանգնեցնե-
լու միտքը, որ յայտնեցինք մեր լրագրի անցեալ
համարներէն մէկում, ինչպէս երևում է, արդէն
արձանացը է դառն դաւաճական մի քանի քա-
ղաքներում, որտեղից ստացած մեր նամակներից
տեղեկանում ենք, որ արդէն պատրաստութիւն-
ներ են տեսնում այդ նպատակով հանգանակու-
թիւն բանալու: Անկասկած այդ միտքը շուտով
իրագործված կը տեսնենք:

Հաստատ աղբիւրներից լսել ենք, որ Թիֆլիսի
գանձարանից 313 հազար ռուբլու գումարը գո-
ղացող խմբով այս օրերս փոստով Եւրոպայից,
վերադարձրեց գանձարանը իր գողացած գումար-
ներից 100 հազար ռուբլի արժէթղթերով և ուղար-
կած թղթի տակ ստորագրեց «Պէտրով»: Ենթա-
դրում են, որ խմբով մնացած արժէթղթերը ար-
դէն ծախել էր առաջուց, մասամբ Թիֆլիս եղած
ժամանակ, իսկ այդ 100 հազար գումարի արժէ-
թղթերը, որոնց թւերի մասին արդէն հեռագրվե-
ցաւ ամեն տեղ, չը կարողանալով ծախել, աւելի
լաւ համարեց վերադարձնել գանձարանը:

Մի հայ երեսասարդ խնդրում է մեզ յայտնել,
որ տեղեկա՞ լինելով հայերէն թէ՛ զբարար և թէ՛
աշխարհաբար լեզուին, կը ցանկանար որ և է
պաշտօն ձեռք բերել՝ կամ Թիֆլիսի հայոց լրա-
գիրների խմբագրատնիքում, որպէս սրբագրող,
կամ քաղաքի որ և է առևտրական հաստատութե-
թիւնների մէջ և զբաղենականներում հայերէն զը-
րաւոր աշխատութիւնների համար Հասցէն կա-
րելի է իմանալ «Մշակի» խմբագրատնիք:

Իրգիւթից մեզ գրում են «Այստեղ կան մի
քանի թուրք խանութներ, որոնցից մէկի տակով
անցնում է մօտակա խոզերիմաւ գիւղի ջուրը:
Թուրքերը առանձին անցք են բացարել խանու-
թից դէպի առու և ամեն տեսակ աղտոտութիւն-
ներ կ'ախտում նրա մէջ, ուրեմն ջուրը մինչև
գիւղ հասնելը աղակաւում է, իսկ այդ ջուրը
հասարակութիւնը գործ է ածում խմելու համար:
Լսում ենք, որ այդ մասին խոզերիմաւ գիւղի
քանակները խնդրել են ներկայացնում ուր հար-
կեն է: Յուսանք, որ ժողովրդի արդար բողոքը կը
յարգվի»:

Մեզ գրում են Իրգիւթից հետեւալը: «Թուրքե-
րը, որպէս արեւելի և տղէ ժողովուրդ՝ ունեն
արեւելու ընդ որ անբարոյական յատկութիւնները:
Խոզերիմաւ կան մի քանի թուրք խանութներ, այդ-
պէս անուանված «չալի-խաններ», որոնք վա-
ղուց է արդէն անբարոյականութեան բուն են
դարձել: Այդ խանութներում նստած են լի-
նում բարոյականութեան ամենատարբեր աստիճանի
վրա կանգնած մարդիկ և այդտեղ ինչ ասեք անբա-
րոյական խօսակցութիւններ են լսվում և ինչ ա-
սեք անբարոյական դործեր են կատարվում: Ան-
ցեալ առ Երևանի քաղաքի քաղաքացիները, այդ-
պէս խօսակցութիւններ են անցնում քաղաքացի-
ներին, որոնք մեծ մասամբ օտարահայա-
տակներ են, բայց այդ փորձը չափովից: Հրա-
ւիրում ենք այդ զգուշիկ երևոյթները վրա մարմնա-
ւոր իշխանութեան ուղարկութիւնը»:

Բոժի-Պրոմիսլից վրաց «Իվերիա» լրագրին
գրում են, որ այնտեղի ձկնորսութեան կապալը,
որ վերջին աճուրդի ժամանակ փխթեցվեց անցաւ
Լիւնսիցովի ձեռքը, դարձեալ վերցրին փխթեց-
ված Մանիլայով և ընդ, Լիւնսիցովին 50 հազար ռուբ-
լի վարձատրութիւն տալով, բացի այն գումար-
ներից, որ նա տուել էր աճուրդի ժամանակ:

Մեր ստացած հեռագրերից և նամակներից
երևում է, որ Բաֆֆի յիշատակին շարունակում
են հոգեհանգիստներ կատարվել թէ՛ մեծ ու փոքր
գաւառական քաղաքներում և թէ՛ գիւղաքաղաքնե-
րում:

Չանգազուրի գաւառի ՂԱԹԱՐՈՒ կոչված

հանքից մեզ գրում են մի աղէտի մասին, որ պա-
տահէ է մայիսի 2-ին: Այդ օրը, երեկոյան ժա-
մի 8-ին, կարճատե անձրեւից յետոյ հանքի կողքով
անցնող գետակը սաստիկ յորդանում է և յան-
կարճակի բարձրանում: Ձրի բարձրանալը ու-
հանքի մէջ թափվելը մէկ է լինում: Անբաղդու-
թիւնը այն աստիճան յանկարծակի է լինում, որ
միանգամայն անկարելի է լինում հանքում գիշեր-
վայ հերթապահ բանուորներին իմաց տալ սպառ-
նացող վտանգի մասին: Թանձր ցիւրը լցնում է
հանքի անցքերը: Անմիջապէս ամեն միջոց գործ-
են դնում հանքում եղողներին ազատելու, բայց
տարաբաղդաբար այդ միջոցները չեն օգնում և
բանուորների հետքը մինչև ամիս 4-ը չէ դառնել:
Հանքում հեղեղի տակ մնացածներին թիւր հաս-
նում է 19-ի:

Ստացանք Եւրոպայի մի քանի աշխատակից
պ. Լէօի մի նոր հեղինակութիւնը «Կոյրի աղչիկ»
վերնագրով: Լէօ այս գրուածքի մէջ, ինչպէս և
առաջ հրատարակած մի քանի պատկերների մէջ
ներկայացնում է մեր գաւառական հասարակ դա-
սի ընտանեկան կեանքի անմիջական կողմերը:
Այդ գրքովին էլ յարմար է ժողովրդական ընթեր-
ցանութեան համար: Գիրք մատչելի է, այն է 5
կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ

Կ. Պոլսի հայ-կաթոլիկների երկու կուսակցու-
թեան հաշտութեան վերաբերութեամբ, որի առի-
թով մի քանի տեղեկութիւն արդէն հաղորդել
ենք, այժմ «Արեւել» լրագիրը հաղորդում է հե-
տեւալը: «Ինչպէս ծանուցուած էր կանխաւ, Զիվեր-
պէյ շարաֆ օր Սաղըդ Աղաճիի Պատրիարքարա-
նը տարաւ Կայսերական իրաւուն հաղորդող Մեծ-
Եպարքոսական թէպէքթէն, որ կը հաւատաւ գո-
յացեալ համաձայնութիւնն ի մէջ երկուց կու-
սակցութեանց: Այս պաշտօնագիր կարգադի-
ցաւ ի ներկայութեան հայ-կաթոլիկ հասարակու-
թեան երեւեաց: Զիվեր պէյ ալ բանախօսու-
թեամբ մը շնորհաւորեց հասարակութիւնն՝ եր-
կուց կուսակցութեանց միութեան համար Գեր-
Աղաքեան պատառնանելով հրաւիրեց զներկայս
եկեղեցին իջնել և Սուլթանին արեւատութեան
համար աղօթել: Եկեղեցւոյն մէջ անգամ մ'եւս
կարգադրուեցաւ յիշեալ պաշտօնագիրը: Պատրիար-
քը պարագային յարմար քարոզ մը խօսեցաւ, և
Օգոստոսիւս վեհապետին արդիւնաշատ իշխա-
նութեան գովեստն ըրաւ: Պատրիարքը վերադա-
ձաւ Պատրիարքարանի մեծ դահլիճն, ուր ստո-
րագրեցաւ շնորհակալեաց ուղերձ մը, զոր Պատ-
րիարքն ինք անմիջապէս տարաւ Կայս. Պալատն,
և Սուլթանին մատուցանել առաւ: Սուլթանը իւր
բարձր գոհունակութիւնն և բարկներն հաղորդել
տուաւ Պատրիարքին և հասարակութեան: Զատիկի
կիրակին Աղաքեան Գերապայեառ մեծ հանգի-
սիւ պատարագեց Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյն
մէջ, ուր խուռն բազմութիւն կար: Յիտ այս ա-
րարողութեան, հասարակութեան երկուց կուսակ-
ցութեանց պատկանող երեւելի հացկերութի մը
հրաւիրեցան, և այսու վերջ տրուեցաւ քսանա-
մեայ հերձուածոյն: Երեկոյն շատեր դացին շնոր-
հատուել զԳեր. Աղաքեան իւր յաջողութեան հա-
մար: Պատրիարքը փութացած էր եղելութիւնն
հեռագրել առ Կարդիալ Ռամբոլա, որ ի դի-
մաց Պապին շնորհաւորեց զինք: Պապը շատ գոհ
եղել է, և կը յուսայ եղբի թէ «այս ողբալի բա-
ժանում անգամ մ'ալ տեղի չունենար»:

ՏԵՂԵԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վանից ստացած մեր տեղեկութիւնները ցոյց
են տալիս, որ Վանի առաջնորդական տեղապահ
Ալէքսանդր եպիսկոպոսը Կ. Պոլսի է տանվում,
թիւրք կառավարութեան կարգադրութեամբ:
Մենք արդէն հաղորդեցինք, որ Մուշի կողմից
երկու հանրագիր է ուղարկված Կ. Պոլսի, Բ. Գը-
րան՝ որով տեղական ազգաբնակչութիւնը բողո-
քում է աւագակային շարժումների և արագա-
կութիւնների դէմ: Այժմ Պոլսի լրագիրները հա-
ղորդում են, որ թիւրքաց ներքին գործերի մի-
նիստրութիւնը՝ ապրիլի 27-ից հրամանագրել է
Բաղէշի կուսակալութեան՝ ուղարկութիւն դարձ-
նել այդ բանի վրա:

Զատիկի տօնի առիթով Կ. Պոլսի հայոց պատ-
րիարքի փոխանորդը մի քանի անձանց ընկերակ-
ցութեամբ այցելութիւն տուեց յունաց պատ-
րիարքին, հայ հռոմէականաց պատրիարքին և
բօլգարներին էկզարխիւս Այդ այցելութեանը փո-
խադարձ այցելութիւն տուեցին հայոց պատրիար-
քին՝ բօլգարներին էկզարխիւ կողմից՝ իր փոխա-
նորդը, հայ հռոմէականների պատրիարքական
փոխանորդը, և վերջապէս յունաց պատրիարքա-
կան փոխանորդը՝ մի քանի անձանց ընկերակցու-
թեամբ: Զատիկի տօնը շնորհաւորելու համար հա-
յոց պատրիարքարան եկան պարսից հիւպատոսը
և անգլիական դեսպանատան երրորդ թարգմանը:
Կ. Պոլսի անգլիական դեսպանը ցանկացել է
տեսակցութիւն ունենալ Յարութիւն պատրիարքի
հետ, և այդ մտքով էլ տեղեկացրել է պատրիար-
քարանին, բայց Յարութիւն Պատրիարքը չէ ըն-
դունել այդ առաջարկութիւնը, յայտնելով, որ ին-
քը հիւանդ է: Առհասարակ Յարութիւն Պատրի-
արքը, ինչպէս տեղեկանում ենք, խոյս է տալիս
Կ. Պոլսի մէջ եղող դեսպանների հետ յարաբերու-
թիւն ունենալուց:

«Արեւել» լրագիրը հաղորդում է հետեւալը:
«Միջեալ շարժում մէջ տեղացած անձները բաւա-
կան շնորհներ պատճառներ են Հալէպի, Տրապիզո-
նի, Սեբաստիոյ, Քարբիքի գաւառաց, Կիւմիւշ-
խանէի մէջ և Եփեսոս գետին եղբայր վրայ: Սե-
բաստիա հարկը տուն և մէկ քանի խանութներ
կործանել են: Կիւմիւշխանի մէջ բարձր բլուր
մը փեր է: Զուրհրն ողողել են Քարբիքի դաշ-
տն ուր բաւական շէտ պատճառներ են: Եփեսոս
գետն յորդել և ողողել է չրջակայ գիւղերը, սա-
կայն գետին վրայ գտնուած նաւակներ յաջողել
են ազատել ողողեալ ժողովուրդն: Այս բոլոր
արկածից մէջ մարդու կորուստ չէ պատահած
բարեբաղդաբար»:

Կ. Պոլսից մեզ գրում են: «Զատիկի երկրորդ օ-
րը մի քանի երեսփոխաններ և մի քանի ուրիշ
անձներ զնային պատրիարքին շնորհաւորելու:
պատրիարքը և Մէրիէ-Վալի յայտնել են, որ
միտալ է այն լուրը, թէ Սուլթանը մերժել է
պատրիարքի հրաժարականը: Սակայն այդ խօս-
քերին հաւատ ընծայող չը կայ: Հիմարտ է
ինքը պատրիարքը մի քանի անգամ Սուլթանի ա-
ռաջ կրկնել է իր հրաժարականի վրա, բայց
սուլթանը մերժել է, յայտնելով, որ իրանից աւե-
ւի յարմար պատրիարք չի գտնի: Այդ լուրի հի-
մում յրուսաղէմի պատրիարք ընտրելու իսկ այդ
բանը միանգամայն չէ ցանկանում: Յարութիւն ե-
պիսկոպոսը, որը ուղղում է անպատճառ իր ձեռ-
քի տակ պահել յրուսաղէմի վանքը»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ֆրիդրիխ կայսրի առաջնութիւնը շարունա-
կաբար լաւանում է: Բերլինում ենթադրում են,
որ բոլշի Բարդէլէքէն չէ սխալվում, յայտնելով,
որ կայսրի հրամանութիւնը գտնվում է այն ճանա-
պարհի վրա, որը տանում է դէպի կատարեալ ա-
ռողջութիւնը:

Հեռագրիւր արդէն լուր բերեց, որ անգլիա-
կան առաջին մինիստրը խօսելով եւրոպական
քաղաքականութեան մասին, այն միտքը յայտ-
նեց, որ Անգլիային անհրաժեշտ է զինատուրվել:
Այդ նպատակով անգլիական զինուորական մի-
նիստը արդէն մի քանի օրինագծեր է ներկա-
յացրել համայնքների ժողովին: Անգլիայի այդ
վճարական սպառնալիքութեանը Եւրոպայում մեծ
նշանակութիւն են տալիս:

Եւրոպական մի քանի լրագիրներ հաղորդում
են, որ բօլգարական կառավարութեան դեկլարա-
ցիան անկայն թաղաւորութիւն հռչակելու մա-
սին: Իսկ մի քանի ուրիշ լրագիրներ էլ յայտ-
նում են, որ Բալկանեան պետութիւններին մէջ
այժմ աւելի քան երբ և ինչ արժանք վն է այն
ժողովը, որ պէտք է մի մեծ պետութիւն կազմել:
Բալկանի փոքրիկ պետութիւններից, պահպանելով
այդ պետութիւններից իւրաքանչիւրի ներքին ան-
կախութիւնը:

Գնեւրալ Բուլանթէ հրատարակեց իր «Գեր-
մանական արշաւանք» վերնագրով գրքովը
2,500,000 օրինակի քանակութեամբ. գիրքը ճիշ-
բար տարածվում է փարիզում և գաւառներում:
Փարիզից հաղորդում են, որ գրքի բովանդակու-
թիւնը այնքան ողորմելի է, որ հեղինակը ամե-

նայն իրաւամբ կարող է իր յոյսը կտրել՝ ցանկա-
ցած նպատակին հասնելու վերաբերութեամբ:
Յայտնվում է որ անհեռատես քաղաքագէտը՝ Իբրե-
զորդ՝ ոչինչ ընդունակութիւններ չունի:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄՈՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի: Ֆիլիպ-աղիտանո
Մեծ իշխան Գեորգի Միխայլովիչին շնորհած է ս.
Վլադիմիրի 4-որդ աստիճանի շքանշանը: Օլգոստո-
սի սկզբին Պրոքլալիկի ուղևորվելու է կենտրո-
նական Ասիայի լեռնային երկրներ: Այդ ճանա-
պարհորդութեան համար իբրեւ ծախս որոշված է
տալ 40 հազար ռուբլի:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 6 մայիսի: Թագաժառանգ Յէ-
սարէվիլը յանձն առաւ ցուցահանդիսի ռուսաց
բաժնի հովանաւորութիւնը: Այդ բաժնը ընդհա-
նուր զարմանք է պատճառում:

ՓԱՐԻՉ, 6 մայիսի: Պատգամաւորների ժողովի
բժնապարտեան խումբը, ժողով կազմելով, կա-
յացրեց մի այնպիսի վճիռ, որով ցանկութիւն է
յայտնվում համաձայնութիւն կայացնել աշակոյ-
մանների միւս խմբերի հետ՝ պարամիշտական
և ոչ-պարամիշտական այն հարկաւոր միջոցների
վերաբերմամբ, որոնց նպատակը լինելու է պատ-
գամաւորների ժողովի լուծումը:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 6 մայիսի: Այսօր Գանիայի
թագաւորական տան անդամների ներկայութեամբ
տեղի ռուսաց արդիւնաբերական գիւղատնտեսա-
կան և գեղարուեստական ցուցահանդիսի բացու-
մը:

ԴՈՒԲՆԱ, 6 մայիսի: Հրատարակվեց պարնէ-
լական կաթոլիկ-պատգամաւորների մանիֆէստը:
Մանիֆէստի կազմողները ընդունում են, որ պա-
պի աթոռին է պատկանում հոգեւոր իրաւաւորու-
թիւնը, բայց պաշտօնական կերպով յայտնում
են, որ իրանդացիները չեն կարող ընդունել՝ որ
այդ նոյն աթոռը իրաւունք ունենայ խառնուելու
իրանդիայի քաղաքական դործերի մէջ:

ՎԻԵՆՆԱ, 6 մայիսի: Թագաժառանգ Բուրգոմ-
սի Դեռուսի Ստեֆանիա յունիսի 10-ին (ն. տօմ)
պէտք է ճանապարհորդեն դէպի Բանիա. նրանք
մի քանի օր կը մնան Զագրեբում, իսկ յետոյ կը
գնան Բանիալուկ և Սկրանով, որից յետոյ Բու-
րգոմ միայնակ կուղևորվի Հէրցեգովինա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մայիսի: Ներքին գործերի մի-
նիստրութեան բժշկական խորհրդի նախագահ
պալատական բժիշկ Զլէկաուէրին, բժշկական-
գիտնական ասպարիզի վրա նրա եռանդուն գոր-
ծունէութեան յիստամակի առիթով, որը լրացել է
այսօր, շնորհված է, Բարձրագոյն բեւերիպտի հետ
միասին, աղանանդներով զարդարված մի ծխա-
տուկ: «НОВОСТИ» լրագիրը լսել է, որ գիւղատն-
տեսական արող քաշելու գործը զարգացնելու
միջոցների վերաբերեալ նախագիծը պետական
խորհրդի մէջ դիմադրութեան հանդիպեց սկզբուն-
քով: Անհրաժեշտ է համարված այդ հարցը են-
թարկել կառավարչների, ֆինանսների և ներքին
գործերի մինիստրների միջաւոր քննութեան,
մասնակից անելով այդ հարցի մշակութեան մէջ
նոյնպէս և գիւղատնտեսական ընկերութիւննե-
րին, գործարանատէրերին և ուրիշ բանիմաց ան-
ձինքներին:

ԲԱՊՈԼ, 7 մայիսի: Երէկ բացվեց Բագուի Նի-
կողայոսեան տօնախմբաւը: Սպասվում են շատ
առևտրականներ և ապրանքների մեծ քանակու-
թիւն: Տրամադրութիւնը շատ լաւ է:

ԲԱՐՅԵԼՈՆԱ, 7 մայիսի: Թագուհին, երէկ ըն-
դունելով ցուցահանդիսի բացման առիթով այս-
տեղ եկած եւրոպական նաւախմբերի գլխավորնե-
րին, յայտնեց, որ նրանց Բարցելոն դալու մէջ
որը տաժում են պետութիւնները դէպի Սպանի-
ան և դէպի թագաւորական տունը:

ՎԻԵՆՆԱ, 7 մայիսի: Այստեղ լուր է ստաց-
ված, որ Զերնզօրներն—Հերցօգովինայի սահմանա-
գլխի վրա սկսել են երկաւ աւազակախմբեր:

ԲԵԼԳԻՍ, 7 մայիսի: Երէկ բացվեց երկաթու-
ղային ուղղակի յարաբերութիւն Վիեննայից դե-
պի Սալոնիկի: Բէլգրադի և Նիշի վրայով: Սեր-
բիական խառնակութիւնների վերաբերեալ լուրե-
րը ճիշդ չեն:

ՓԱՐԻՉ, 7 մայիսի: Զօրաբանակը լրացնելու
վերաբերեալ օրինագծի քննութեան ժամանակ
սենատը մերժեց այն առաջարկութիւնը, որով ա-

ուսմանը հարկավոր էր ոչնչացնել անվտանգության և զանգվածների արտոնությունները՝ զինուորական ծառայության վերաբերյալ համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 7 մայիսի: «Новое Время» լրագրի № 4371-ի մէջ տպւած էր մի նկատողութիւն, որ ծակած քսան կօպէկանոցները զանաւորական կրնդունվեն 16 կօպէկով, 15 կօպէկանոցները—12 կօպէկով և 10 կօպէկանոցները—8 կօպէկով: Այդ առիթով ֆինանսների մինիստրութիւնը անհրաժեշտ է համարում պարզել, որ իր կողմից ոչինչ կարգադրութիւն չէ եղել ծակ փողերի դերը պակասեցնելու վերաբերյալ, և որ այդ փողերը ընդունվում են զանաւորական առաջնային հիմունքների վրա: Պետերբուրգի դոմայի դահլիճում տօնվեց պալատական բժիշկ Զգեկաուելի յօրեկանը, ներկայութեամբ Մեծ Իշխան Պաւլ Ալեքսանդրովիչի, կարգադրեցան Բարձրագոյն անձանց հեռագրները և ընդունվեցան բաղմամբիւ պատգամաւորներ:

Վիեննա, 7 մայիսի: Հէրցեգովինա մտած Զէրնօգորայի աւագակամերը հալածվեցան. նրանց առաջնորդ Միլիտան-Խիչ սպանվեց: Սառնիկից եկած տեղեկութիւնները՝ արեւնհեղութիւն:

Ներքին և զորքերի տեղափոխութեան մասին սուտ են:

ՆիՇ, 7 մայիսի: Սկսվեց Նիշ-Սալոնիկեան ճանապարհի երթևեկութիւնը:

Աթէնք, 8 մայիսի: Վերջնականապէս որոշված է, որ թագուհին կուղևորվի Ռուսաստան մայիսի 12-ին:

Վիեննա, 8 մայիսի: Կայսրութեան ներսում տեղաւորված գալիքեան զօրազորները շուտով կը տեղափոխվեն լրացուցիչ յատուկ շրջանները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲԱԳՐՈՒ Ա. Շատ ուրախ էինք այդ հեռագրերը ստանալու, բայց բոլորովին անձնական բան համարելով, երբեք չէինք տպագրել այդ հեռագրերը:

ՍԱՂԱՆԻ Յ. Զ. Զարմանում ենք, որ համարները ստացվել են միայն № 40-ից, քանի որ մենք բոլոր համարները տարվայ սկզբից ուղարկեցինք: Հարցրէք փոստատանը, մենք էլ կը հարցնենք այստեղի փոստատանը:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop. Иногородные, желающие получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (b)

Մարմին մասերը, մանաւանդ ոտների մասերը փոխելուց պահպանող փողի

ԳԱԼՄԱՆԻՆ

Ժախվում է ղեկավարներում և զորքիստաններում մօտ եւրօպայի նշանաւոր քաղաքներում և կայսրութեան բոլոր քաղաքներում: ԳԼԽԱՐՈՐ ՊԱՀԵՍՏ գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, հարադրի, ղեկավարան տիրել, ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԵՆՍԿԻՆ՝ մօտ, էլէկտրօպալատ փողոց, № 39. Գալմանի մեծ արկղը արժէ վարչապետ 50 կ., փղըրը 30 կօպ.

ՊԵՏԻ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՄՈՒՄՆԵՐԻՑ և պահանջի, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու զործածութեան բացատրութիւնը և փարկի ցուցահանդիսի մեղալները: 1—10 (b)

ԴԵՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՆԵՐԻ ԵՒ ՄԵՔԵԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Միջի-փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ՝ երևանեան հրապարակից), Նարինանովի տանը ԲԱՅՎԱՅԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԻ ՊԱՀԵՍՏ ԿԵՐՈՒՆԸ ՄԱՍ ՄԱՍ ԾԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերօսինը տարբերվում է իր յատկութեամբ Թիֆլիսում մաս մաս ծախվող կերօսինից: Նա հոտ չունի և կատարելապէս անվտանգ է:

ԳՆԵՐԸ ԶԱՓԱԽՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄԱՏ ԲԱԳՐՈՒ ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԳՆԵՐԻՆ:

Ծառաների կողմից խաբեարկութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ դալին է կերօսին առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ „E. A. Цатуровъ. Керосинъ“ գրութեամբ:

Առաջին պահեստը. ՎՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՏ, Պալլովսկու բժշկարանի կողքին: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերօսին ստանալ առանձին գրքից կամ վճարել ամէն ամիս: 12—25 (Շ. Ե.)

CAFFÉ MAENDEL

WIEN, Rothenthurmstrasse

Այդ կաֆէն վիեննացիութեան բնակող թէ հայերի և թէ արեւելից եկած ուրիշ ազգերի ներկայացուցիչների հաւաքվելու տեղն է:

Zeitungen in allen Sprachen, auch armenische Zeitungen, u. a. „MSCHAK“ und „AREVELK“.

Այդ կաֆէում ստացվում են հայոց լրագիրներ „ՄՇԱԿ“ և „ԱՐԵՎԵԼԿ“ 4—4 (b)

Արդեն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ ՇՎԵԴԱԿԱՆ ԼՈՒՑԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԵԻՍ ԳՆՈՎ:

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՐԻ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

Գործարան Գ. Ա. ՏԵՐ-ԱՍՏԱՆՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, վերս կոչված Թաղում: 48—50

ԲԱԳՐՈՒ ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ՝ ընդունում է ամէն տեսակ գրքեր կօմիսիայով վաճառելու համար, Հասցէն. БАКУ, „Каспійская Книжная Торговля“ Седраку Тараянцу. 8—15 (Հ)

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԿՈՒՍԱՆՈՑԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԻՇԽԱՆՈՒՀԻ ԵՐԿԱՅՆԱԲԱՋՈՒԿ-ԱՐԴՈՒԹԵԱՆ Ի ղրմաց կուսանոցի յայտնում է, որ ամիս 10-ին, երեքշաբթի օր, ժամը 10-ին, կուսանաց եկեղեցում կը լինի պատարագ և հօգեհանգիստ ի յիշատակ Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի հիմնադիր՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ: 1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդում մայիս ամիս 25-ին, երեկոյան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՐԻ (առանց կրկնաձրդի) կապալով տալու Աւետիք փրօյեանցից դպրոցին ընծայած կայուածքը, որը զանվում է Սօլլատակի փողոցում №№ 6 և 11: Պայմանաթուղթը կարելի է կարգալ հոգաբարձութեան ղեւանատան մէջ ամէն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10—12 ժամ: 1—2

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Լ Է Օ

ՊԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գինն է 15 կօպէկ: Վաճառվում է ԲԱԳՐՈՒՆ Տիգրան ՂՈՒԿԱՎԱՋԱՆԻ մօտ, ՇՈՒՇԻՆ՝ Անդրէաս ԱՐԱՎԱՍԵԱՆԻ մօտ: 1—8

ԺԵՐԱՐԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՑԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

(Կօրցօլայա փողոց, նախկին Արծրունու գալէրէա), ստացված է ԲԱՐԱՆ սպիտակեղէնի համար, սպիտակ քաթան՝ 1 1/2, 2, 2 1/2 և 3 արշին լայնութեամբ: ՍԵՂԱՆԻ սպիտակեղէն, որ է՝ պարագայը 6, 12, 18, և 24 մարդու համար, ԱՆՁՆՈՑԻԿՆԵՐԻ, ԵՐԵՍՍՐԵԻՉԵՐԻ և ՍՓՈՌՏԵՐԻՆ՝ սպիտակ և գունաւոր:

ԱՄԱՌԱՑԻՆ ԿՏՈՐՆԵՐ՝ կանանց շորերի համար, մոխրագոյն և սպիտակ ՐԱԳՕԺՆԵՐ և ՊԱՐՈՒՄԻՆ կիտոնների համար, կանանց և տղամարդկանց ամէն տեսակի գուլպաներ: ԿԱՀԱՐԱՍՈՒԹԻ ԿՏՈՐՆԵՐ և ՎԱՐԱԳՈՑՐԵՐԻ (Tulle Nottingham). 3—5

ԳՕՆԵԼԻ ԵՒ ԼԷՑՏ

ՍԱՌՈՒՑ

կատարելապէս մաքուր, ֆիլտրած ջրից, ներքին գործածութեան համար՝ խմելի և ուտելի մէջ:

Մ Ա Վ Ո Ւ Մ Է

ԶԵՄԵԼԻ սառուցի գործարանում, վօրնցօլի արձանի մօտ, Թիֆլիսում: 3—3

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱՋԱՑԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերկօլայա փողոցում, Կօնստանտինօվի տան կից, որտեղ գտնվում է Լօբիօ և ընկ. տպարանը):

Պատու ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻԱՑԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեւի մեքենաներ, նոյնպէս և ջիվիլի հաշակարար ՖԻԼՏՐ, որը միակ է, որ աշտոլութեամբ մաքրում է ջրերը կապալից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Ծնորդով այն օժանդակ միջոցների, որ տալին է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիշտում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի գէլատինան, մրգային և զագային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱՆԱԿԱՆ ԲՃՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԵՂԻՆ, ԷՄԻՍ, Կարկազի, Մարիէնադի ջրերը, Լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշակարար բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միւտ թարմ դրութեան մէջ ձեռք բերել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ամբողջութեւն գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամէն ժամանակ:

Տարածալուծիչներից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողերին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ 18—50 (b)

ՀԱՐԱԽՈՐ Է ՄԻ ԿԱՄ ԵՐԿՈՒ ՍԵՆԱԿ

կահաւորված, բոլոր յարմարութիւններով, ծառայով և ճաշով:

ИЩУТЬ ОДНУ БОЛЬШУЮ ИЛИ ДВѢ КОМНАТЫ меблированныхъ, со всеѣми удобствами, прислугою и со столомъ. Адресъ оставитъ въ агентствѣ Бебутова и К°. 5—5